ԱՐԵՎՄՈՒՏՔԸ՝ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2023.4-95

Սկիզբը՝ նախորդ համարում:*

Եւրոպայի մեղքերի ամօթից այլեւս կարելի չէ նայիլ երկնքին:

Յոզեֆ Մարքվարտ
գերմանացի արևելագետ, հայագետ

Ես ամերիկա-անգլոֆիլությունը համարժեք եմ համարում թուրքոֆիլությանը և հայրենիքի դավաճանությանը:

Գարեգին Նժդեհ

Հիմնաբառեր. *Արևելք-Արևմուտք հակամարտություն, քրիստոնեություն, իսլամ, հայկական պետականության կորուստ, անկախության պայքար, դավադրություն, խաչակիրներ, հավասարակշռության տեսություն, Բեռլինի վեհաժողով, ցեղասպանություն, Սևրի պայմանագիր, Լոզանի հաշտության պայմանագիր, արցախյան գոյամարտ*

Հայ ժողովուրդը Հայկական բարձրավանդակի ծնունդն է և Արևելքի զավակը: Ավանդապաշտ է, բնապաշտ, զգացմունքային: Նրա մշակույթը սրտի մշակույթ է, ուրիշի «աշխարհ» մտնելն է և ուրիշի հոգս ու ցավով ապրելը... Արևելքի մարդը չի հավակնում աշխարհի և ուրիշի ճանաչողությանը: Դրանով է պայմանավորված, որ հանճարեղ Թումանյանը, որի հարազատ տարերքն Արևելքն էր, նշում էր, որ մենք ո՛չ մեզ ենք ճանաչում և ո՛չ էլ մեր հարևաններին...

Արևմուտքն աշխարհն իմաստավորում է բացառապես բանականությամբ: Այստեղ առաջնայինը մարդը չէ, այլ տեխնիկան: Այստեղ ամեն ինչ հաշվենկատ է, շահի վրա հիմնվող: Այստեղ չկա ուրիշի հոգսով ապրելը: Արևմտյան քաղաքակրթությունը ներառում է այլ «հոգևոր ուղի», որը հենվում է բանականության վրա, դավանում բարոյաէթիկական և մշակութային արժեքների այլ համախումբ, որը բխում է բանական էգոիզմից...

Սրանցից յուրաքանչյուրն արժեքավոր է յուրովի, ինչի մասին է վկայում դեռևս Հերոդոտոսի և Արիստոտելի ստեղծած «բարբարոս Արևելքի և քաղաքակիրթ Արևմուտքի» հայեցակարգը, որը հետագայում խորապես մշակվեց Շ. Մոնտեսքյուի «Օրենքների ոգու մասին» և Ա. դե Թոքվիլի աշխատություններում ու դարձավ տիրապետող հասարակական գիտակցության մեջ:

Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

1976 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ: 1987 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան, 1990 թ.՝ դոցենտի կոչում: 2019 թ. օգոստոսին նշանակվել է «Փիլիսոփայության և հայոց պատմության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 40 գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0002-6503-4872

* *«Ամբերդ» Տեղեկագիր, 2023/3 (22),* https://asue.am/upload/files/amberd/2023-year-3/10.pdf

Ալեքսանդրի արշավանքներից և հատկապես քրիստոնեության պետականացումից հետո մեր հայացքն ուղղվեց դեպի Արևմուտք, դեպի Եվրոպա… Մենք, որ Արևելքի հետ միասին պատերազմում էինք Արևմուտքի դեմ, դարձանք արևմտյան արժեքների կրողն ու տարածողն Արևելքում: Եվ Արևելքում մեզ սկսեցին նայել որպես օտար մեկի: Մինչդեռ Արևմուտքը մեզ երբեք չդիտարկեց որպես դաշնակից և չկանգնեց մեր թիկունքին, թեև մենք մեզ վրա էինք վերցրել արևմտյան մշակութային ու քաղաքական արժեքները տարածողի ծանր ու պատասխանատու դերն Արևելքում…

Հեղինակը բազմաթիվ օրինակների միջոցով փորձում է հիմնավորել, որ հայոց պետականության կորստի, մեծ և փոքր բոլոր ողբերգությունների հիմքում մեր սխալ ու չհիմնավորված կողմնորոշումն էր դեպի Արևմուտք, այն դեպքում, երբ վերջինս ունի իր աշխարհաքաղաքական շահերը, որոնք երբեք էլ չեն ներառել Հայաստանի ինքնանկախ, առավել ևս՝ հզոր պետության գոյությունը: Ցավոք, նույն համառությամբ, այսօր էլ կրկնում ենք այդ սխալը և մեր բնական դաշնակիցների փոխարեն՝ դիմում Արևմուտքի աջակցությանը…

Մեր ժողովրդի և մտավորականության «կույր» արևմտամետության հետևանքով ստացած հաջորդ հարվածը 1878 թ.-ին էր՝ Բեռլինի վեհաժողովում, որը հրավիրվել էր Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի պահանջով՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու և Ռուս–թուրքական պատերազմում Ռուսաստանի արձանագրած հաջողությունները սահմանափակելու նպատակով: Ռուս–թուրքական պատերազմները միտված էին Սև ծովի ավազանի և Կովկասի տարածաշրջանի նկատմամբ վերահսկողության ամրապնդմանը (սկսվելով դեռևս 1568–1570-ական թվականներին, դրանք շարունակվում են մինչև հիմա, և եթե անգամ որոշակի դրվագներում ռուսներն ու թուրքերը հանդես են գալիս դաշնակցի և բարեկամի դիմակներով, միևնույն է, այդ հակամարտությունը շարունակվելու է նաև հետագայում):

1877-1878 թթ. պատերազմում Ռուսաստանը պարտության մատնեց Օսմանյան կայսրությանը: Սան Ստեֆանոյի պայմանագրում հատուկ հոդվածով (16-րդ) նախատեսվում էր վարչական բարեփոխումներ անցկացնել նաև Արևմտյան Հայաստանում, Ռուսաստանին էր անցնում Արդահանը, Կարսը, Բայազետը, որը մեծ հույսեր արթնացրեց հայ ժողովրդի մեջ: Թերևս, դա էր պատճառը, որ, Մ. Վարանդյանի բնութագրմամբ, եթե մինչև պատերազմը «ռուսասեր» էր միայն թուրքահայ գյուղացիությունը, իսկ միջին թուրքահայ մտավորականը, բուրժուան, վաճառականը, շատ թե քիչ գիտակից ու աչքաբաց թուրքահայը՝ «ռուսատյաց», ապա պատերազմի ընթացքում և, հատկապես, դրանից հետո թուրքահայ հասարակության մեջ կըտրուկ մեծացավ «ռուսասիրությունը», ռուսական կողմնորոշումը[1]:

Սան Ստեֆանոյի պայմանագրով անկախ էին ճանաչվում Չերնոգորիան, Սերբիան և Ռումինիան: Բոսնիան և Հերցեգովինան ստանում էին ինքնավարություն Օսմանյան կայսրության մեջ, իսկ Բուլղարիան հռչակվում էր ինքնավար իշխանություն: Այդ ամենը չէր կարող չանհանգըստացնել Մեծ Բրիտանիայի իշխանություններին, որոնք իրենց հայտարարել էին բոլոր մահմեդականների հովանավոր՝ ի հակադրություն Ռուսաստանի, որը հանդես էր գալիս որպես Արևելքի բոլոր քրիստոնյաների հովանավոր: Եվ նրանք՝ Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան, կազմակերպեցին 1878 թ. Բեռլինի վեհաժողովը՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու, ավելի ճշգրիտ՝ Ռուսաստանի հաջողությունները սահմանափակելու նպատակով: Այնտեղ անդրադարձ եղավ նաև Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին, և այն շրջվեց բառիս բուն իմաստով: Դաշնագրի 61-րդ հոդվածի ընդունմամբ Արևմտյան Հայաստանը դարձավ միջազգային քաղաքականության օբյեկտ և ներքաշվեց դեռևս XVII դարի երկրորդ կեսից Օսմանյան կայսրությունը բաժանելու համար ծավալված պայքարի ու միջ-

[1] Վարանդյան Մ., Հայկական շարժումների նախապատմությունը, հ. 2, Ժնև, 1913, էջ 134:

պետական աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հակամարտությունների ոլորտ: Բեռլինի վեհաժողովը բացահայտեց նաև եվրոպական մեծ տերությունների միջև գոյություն ունեցող լուրջ հակասությունները, որոնք վերաբերում էին ինչպես Ասիայի և Աֆրիկայի գաղութային երկրներին, այնպես էլ թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ճակատագրի վճռմանը:

Պատահական չէ, որ այս շրջանի մեր ամենահիրատես դիվանագետը՝ Նուբար Փաշան, Սան Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի վեհաժողովի մասին խոսելիս Մինաս Չերազին ասել է. «Սան-Ստեֆանոյի դաշնագրին մէջ 16-րդ յօդուածը դնել տալու յաջողիլը այնպիսի գործ մըն է, որուն համար հայ ժողովուրդը ոսկի արձան մը պէտք է կանգնեցնէ Ներսէսի յիշատակին: Բայց Սան-Ստեֆանոյի դիմումէն յետոյ, Ներսէսի ընթացքը քրէական սխալներու շարք մը եղած է»: Նույն Նուբար Փաշան Հայաստանի կոտորածներից հետո ասել է. «Այս բոլոր ջարդերուն գլխաւոր պատասխանատուն Ներսէս Պատրիարքն է»[2]:

Վեհաժողովը չարդարացրեց հայերի հույսերը, որի արդյունքներից դժգոհ մնացին նույնիսկ նրանք, ովքեր կանգնած էին Ներսես Վարժապետյանի կողքին: Պատրիարքի առաջարկը, թերևս, շատ էր արմատական, ինչը վախեցրեց նույնիսկ Ազգային ժողովի անդամների մեծ մասին, այն համարվեց ժամանակավրեպ և վտանգավոր, քանի որ դրանով հայերը կորցնում էին հավատարիմ հպատակի համարումը և կասկածելի էին դառնում թուրքերի աչքում: Դժգոհ էր նաև Գրիգոր Օտյանը՝ այս շրջանի թուրքահայ իրականության ամենանշանավոր մտածողն ու Վարժապետյանի ոգեշնչողներից մեկը: Հետագայում նա դառնությամբ հայտարարելու էր. «Տարի մը աշխատեցանք սա 61-րդ յօդուածը դնել տալու համար. երանի թէ հիմա երկու տարի աշխատէինք եւ կարենայինք ջնջել զայն – այդ յօդուածը վնասակար պիտի ըլլայ մեր ազգին...»[3]:

Վեհաժողովի հայ պատվիրակներից Մինաս Չերազն այն կարծիքին էր, որ պետք չէ խոսել այն մասին, թե ինչ շահեցինք, այլ հարկ է անդրադառնալ կորուստներին[4], իսկ Մկրտիչ Խրիմյանը, որն այնպես համոզված էր, որ բավական է եվրոպական քրիստոնյա պետությունների ղեկավարներին ներկայացնել հայ ժողովրդի ծանր վիճակը, ինչպես ինքն էր ասում՝ «լացի լեզվով», և նրանք կազատագրեն հայ ժողովրդին և Հայաստանը, հետագայում խոստովանում է. «Բեռլին տեսած ըլլալեն բացի ուրիշ օգուտ չունեցանք»[5]:

Վեհաժողովի որոշումից դժգոհ էր նաև ամերիկահայ մտավորականության ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Մկրտիչ Սմբատ Գաբրիելյանը, որովհետև միանգամայն մեծ էին նրա ակնկալիքները: Բարեփոխությունների այդ հոդվածը, նրա կարծիքով, «երկբայական արժէք մը ուներ և զոր Վեհաժողովը պիտի մտցներ հոն եթէ հայ պատուիրակութիւն մը պետութեանց դիմած իսկ չըլլար», քանի որ այդ հոդվածով եվրոպական կայսրությունները լուծում էին իրենց աշխարհաքաղաքական հիմնախնդիրները և ոչ թե հայկական հարցը: Մ. Ս. Գաբրիելյանի բնորոշմամբ, այդ հոդվածը «յոռեգոյն էր քան անօգուտ, զի մէկ անօգուտ յոդուածի համար երկու ահեղ թշնամիներ շահած էինք – թուրք և ռուս կառավարութիւններին», որով և սկիզբ դրվեց հայկական ճգնաժամին[6]:

Մեր պատմագրության մեջ իշխող տեսակետներից մեկն այն է, որ վեհաժողովի մեծագույն ձեռքբերումը Հայկական հարցի միջազգայնացումն էր, որը կարևոր դեր խաղաց ազգային ինքնագիտակցության վերելքի և քաղաքական կողմնորոշման մեջ: Նման տեսակետը, անկասկած, ունի գոյության իրավունք, սակայն, այն ենթադրում է նաև խորապես քննել և հասկանալ, թե որն է հարցի միջազգայնացման արդյունքը: Եվրոպական մեծ տերությունների քաղաքական և քաղաքագիտական հաշվարկներում մտնում էր, արդյոք, Օսմանյան կայսրության մասնատումը, առավել ևս՝ «անկախ» և «ինքնօրեն» Հայաստան պետության ստեղծումը: Գերտերու-

[2] Ա. Չոպանյան, Պատասխանատուները, // «Անահիտ», Ա տարի, թիվ 3, 1899, էջ 89:
[3] Նույն տեղում, էջ 93:
[4] Նույն տեղում, էջ 93:
[5] Նույն տեղում, էջ 93:
[6] Մ. Ս. Գաբրիելեան, Հայկական ճգնաժամն եւ վերածնութիւն, 2-րդ հրատ., Պոստոն, տպ. Ատլանդեան, 1909, էջ 22-24:

թյուններից ոչ մեկը նման ծրագիր չէր հետապնդում: Քաղաքականությունը ենթադրում է իրատեսություն, մինչդեռ մենք այս խնդրին մոտեցանք՝ համակված մեզ հատուկ ռոմանտիզմով և իդեալիզմով: Մենք կուրորեն հավատում և վստահում էինք Եվրոպային, մասնավորապես՝ Անգլիային և Ֆրանսիային: Օսմանյան կայսրությունում Ռուսաստանի դեսպան Մոլչանովը գրում էր. «Հայերը, որ մինչև հիմա քիչ էին տարվում իրենց ազգութեան իրավունքների վերականգնման խնդիրներով, այժմ բացահայտ ասում են, որ Անգլիան կստիպի և Ռուսաստանին, և Թուրքիային ճանաչելու Հայաստանի ինքնավարությունը»[7]: Իհարկե, այդ առասպելը ստեղծել էր ինքը՝ հայ ժողովուրդը, իսկ անգլիական դիվանագիտությունն իր առաջ նման խնդիր չէր դրել: Հակառակը, այն հետապնդում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու և նրան հզորացնելու նպատակ՝ որպես պատնեշ ռուսական կայսրության առաջխաղացումների դեմ, որին համարում էին իրենց գլխավոր թշնամին և մրցակիցը: Բենջամին Դիզրայելին նվիրված աշխատության մեջ Անդրե Մորուան նկատում էր, որ Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը Անգլիան համարում էր իր քաղաքական ազդեցության թուլացումը Մերձավոր Արևելքում և Բոսֆոր-Դարդանել նեղուցների վրա: «...նեղուցները պետք է պատկանեն Սուլթանին կամ Անգլիային և ուրիշ ոչ ոքի»,- այդպես էր տեսնում այդ հարցի լուծումը Մեծ Բրիտանիայի վարչապետ, ծագումով հրեա Բենջամին Դիզրայելը, որը նաև ասում էր. «Մեզ համար կարևորը հայկական վտանգի դեմ Թուրքիայում պաշտպանվելու միջոցներ գտնելն է»[8]: Այս արտահայտությունը, պարզում է, Հայկական հարցի նկատմամբ նրա գլխավորած անգլիական պահպանողական կառավարության վարած քաղաքականության ուղենիշն էր: Թերևս, անգլիական իշխանությունների հակահայ կեցվածքի իրական պատճառներից էր նաև այն, որ նրանք, ի դեմս հայերի, տեսնում էին ռուսական քաղաքականության «գործիքների»: Սակայն, ցավալին այն էր, որ ռուսները նույնպես հայերին դաշնակիցներ չէին համարում: Ալեքսանդր II-ը Պետերբուրգում գտնվող պատրիարքի դեսպան Խ. Նար-Բեյին իր դժգոհությունն էր հայտնում, որ «հայերը ընդդիմանում են ռուսական ծրագրին», հետևաբար՝ նրանք ոչ թե Ռուսաստանի, այլ Անգլիայի դաշնակիցներն են: Եթե անկեղծ խոսենք, ապա պարտավոր ենք խոստովանել, որ ցարի «մեղադրանքի» մեջ որոշակի ճշմարտություն կար, եթե անգամ ոչ այն իմաստով, որ հայերն «անգլիացիների դաշնակիցներն» էին, ապա գոնե այն իմաստով, որ հետևողական և հավատարիմ չէին ռուսական կողմնորոշման հանդեպ, որը ոչ միայն դիվանագիտության բացակայության, այլև աշխարհաքաղաքական զարգացումների տրամաբանության չիմացության արդյունք էր: Նման ենթադրություն անելու համար հիմք էին տալիս ոչ միայն Մ. Խրիմյանի և Մ. Չերազի գործունեությունը Եվրոպայում, այլև պատրիարք Ներսես Վարժապետյանի և Ազգային ժողովի, ի լուր աշխարհի, արված հայտարարությունը, որն անմիջապես թարգմանվեց բոլոր լեզուներով և տարածվեց, թե «թուրքերի ձեռքով կատարված հարստահարութիւններն այնքան խիստ և անտանելի չէին, քանի որ միայն մարմինն էին վնասում, իսկ կար մի ուրիշ երկիր՝ Ռուսաստանը, որտեղ հայերի հանդեպ կատարված հարստահարությունները «թէ ոգին, թէ մարմինը միանգամայն կը վնասէն եւ ազգին գոյութեանը կը սպառնան»[9]:

Սակայն, անաչառ լինելու համար ասենք, որ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի հայտարարությունները ոչ թե հայերի իրական դիրքորոշման նկատմամբ եղած մտահոգություններ էին, այլ որոշակի քաղաքականություն՝ սեփական գործողությունները կամ անգործությունը հիմնավորելու և արդարացնելու նպատակով, որը պահպանվեց նաև Բեռլինի վեհաժողովից հետո:

Անգլիան և Ռուսաստանը հազիվ թե չիմանային այն պարզ ճշմարտությունը, որ հայ ժողովուրդը որևէ պետության քա-

[7] Ջ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 70-ական թթ.), Եր., 1978, էջ 197:
[8] Моруа А. Жизнь Дизраэли. М.: Политиздат, 1991. 254 с.
[9] Սարուխան, Հայկական խնդիրն եւ ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860–1910 թթ.), Թիֆլիս, 1912, էջ 118:

ղաքական խաղերին «գործիք» չդարձնելու համար անհրաժեշտ էր պաշտպանել նրա արդար դատը թուրքական «զուլումի» հանդեպ: Արևմուտքում կային քաղաքական գործիչներ, որոնք համոզված էին, որ Ռուսաստանի մուտքը դեպի հարավ փակելու ամենաուղիղ ճանապարհը հայկական հզոր պետության ստեղծումն է: Համենայնդեպս, այդպես էր մտածում բրիտանական ակադեմիայի անդամ, պատմաբան և հասարակական – քաղաքական գործիչ Ջեյմս Բրայսը (1838–1922 թթ.). «Եթէ կ'ուզենք Ռուսիոյ յառաջխաղացութիւնն յԱսիա կասեցնել, հայ ազգայնութեան զարգացումը անբաղդատելի կերպով ամենալաւ, թերեւս միակ տեւական միջոցը կ'ընծայէ»[10], որովհետև հայերն այնքան էլ չեն վստահում ռուսներին, քանի որ կասկած ունեն, որ ռուսները կարող են «մարել գործածութիւնը իրենց հին և մշակեալ լեզուին» և սահմանափակել իրենց եկեղեցու իրավունքները:

1896 թ. իր ելույթներից մեկում Մ. Ս. Գաբրիելյանը ծաղրում է Արևմուտքի քրիստոնյա տերությունների խոստումները. «Հայաստան, հակառակ Եւրոպայի բոլոր խոստումներուն, հակառակ այն ամէն բարձրահնչիւն ճառերուն որք ի նպաստ անոր խօսուած են յԱնգլիա եւ յԱմերիկա, հակառակ այն իրողութեան են, որ Հայաստան, Պեռլինեան դաշնագրով տրած է ընդ պաշտպանութեամբ Մեծն Տերութեանց առհասարակ, եւ Կիպրոսեան դաշամբ, Մեծին Բրիտանիոյ հովանաւորութեան տակ է մասնաւորի: Հակառակ, ըսի, բայց աւելի ճշմարիտ կը լիներ ըսել շնորհիւ Եւրոպական պաշտպանութեան եւ համակրանաց կը կործանի Հայաստան»[11]:

Ինչ արեց Եվրոպան: Խոստացավ աջակցություն և հովանավորություն, ապա մերժեց. «Հայաստանի եւ Եւրոպայի միջեւ ենթադրուած բարոյական դաշնակցութիւնը երազ մըն էր», իսկ հայերի և Բ. Դռան միջև առկա «հին յարմարեցումն» արդեն չկար: Եվ քանի որ սուլթանը չէր կարող պատժել եվրոպական տերություններին, պատժեց նրանց թույլ դաշնակցին...[12]

Բեռլինի վեհաժողովի հրավիրումը de jure (դեյուրե) պայմանավորված էր նրանով, որ Սան Ստեֆանոյի պայմանագիրը հակասում էր Փարիզի հաշտության պայմանագրի դրույթներին, մասնավորապես՝ դրա 7-րդ հոդվածին, համաձայն որի՝ պայմանագիրը ստորագրած յուրաքանչյուր պետություն պարտավորվում էր հարգել Օսմանյան կայսրության անկախությունն ու ամբողջականությունը (status quo): Անդրադառնալով այս հարցին՝ Կ. Մարքսը գրում էր, որ, սկսած 1815 թվականից, Եվրոպայի մեծ տերությունները ոչ մի բանից այդքան չէին սարսափում, որքան Օսմանյան կայսրության ստատուս քվոյի խախտումից[13]: Իսկ ստատուս քվոյի քաղաքականությունն Օսմանյան կայսրության սուլթանական իշխանության կողմից քրիստոնյա հպատակների ճնշման հավերժացումն էր[14]: «Եվրոպական դիվանագիտության, նույնիսկ եվրոպական մամուլի համար ամբողջ արևելյան հարցը հանգում է հետևյալ երկընտրանքին՝ կա'մ ռուսների կողմից Կ.Պոլիսի զավթում, կա'մ ստատուս քվո: Երրորդ ելք նրանց համար գոյություն չունի»[15]: Այդ հարցն իր ամբողջ սրությամբ վերստին բարձրացավ Բեռլինի վեհաժողովի օրերին: Նեղուցների հարցը իր քաղաքականության դիվանագիտական կարևորագույն խնդիրը դարձրեց Մեծ Բրիտանիան: «Մեր դիրքավորումն ամբողջապես տարբեր է մյուս կառավարությունների դիրքավորումներից»,- ասում էր Մեծ Բրիտանիայի վարչապետ Բիքոնսֆիլդը: Այդ քաղաքականությունը պայմանավորված էր ոչ թե թուրքական սուլթանի նկատմամբ Անգլիայի բարեկամությամբ, այլ Բալկաններում և նեղուցների շրջանում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը սահմանափակելու ցանկությամբ[16]: «Նեղուցները պետք է պատկանեն Սուլթանին կամ Անգլիային և ուրիշ ոչ ոքի»,- ասում էր Դիզրայելը: Դա էր անգլիական իշխա-

[10] Մ. Ս. Գաբրիելեան, Հայկական ճգնաժամը..., էջ 101:
[11] Մ. Ս. Գաբրիելեան, Հայ ցեղը (Ազգային ատենախօսութիւն), Նիւ–Եորք, 1911, էջ 86:
[12] Նույն տեղում, էջ 90:
[13] К. Маркс и Ф.Энгельс, соч., т. 9, էջ 393:
[14] Նույն տեղում, էջ 411:
[15] Նույն տեղում, էջ 389:
[16] Տես Ջ. Կիրակոսյան, 1878 թ. Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և անգլիական դիվանագիտությունը, էջ 85, http://ysu.am/files/07J_Kirakosyan.pdf

նությունների հակահայ կեցվածքի իրական պատճառը:

Բելգիացի իրավաբան, «Հայաստանը, հայերն ու դաշնագրերը» աշխատության հեղի-նակ Գուստավ Ռոլեն Ժեկմենի կարծիքով, Բեռլինի վեհաժողովը խնդիր ուներ Սան Ստե-ֆանոյի թուրք-ռուսական պայմանագիրը փոխարինել «թուրք-եվրոպական տրակտատով», որը պիտի ապահովեր թուրքահպատակ հայ քրիստոնյաների իրավունքների պաշտպանությունը՝ եվրոպական տերությունների միացյալ երաշխիքով: Բեռլինի տրակտատն առաջ էր քաշելու Թուրքիայի միջազգային պարտավորությունների հարցը: Սակայն, իրականում, Բեռլինի վեհաժողովի նպատակը բոլորովին այլ էր՝ զրկել Ռուսաստանին հայաբնակ թուրքական գավառների նկատմամբ իրական պրոտեկտորատի իրավունքից: Ծրագիր, որին ձգտում էր Բարձրագույն դուռը՝ լավ հասկանալով հետևյալը. «Ընդհանուր պատասխանատվությունը ոչ մեկի պատասխանատվությունը չէ»[17]: Նրանք լավ գիտեին, որ գերտերությունների միջև առկա հակասություններն այնքան խորն են, որ երբեք թույլ չեն տալու նրանց միավորվել, և պետք է խոստովանել, որ հմտորեն կարողացան օգտվել այդ հակասություններից: Սուլթան Համիդը սիրում էր կրկնել. «Օսմանեան ոյժի գաղտնիքը քրիստոնեաները պառակտուած պահելու հնարամտութեան մէջ է»[18]: Անկասկած, նա նկատի ուներ ոչ միայն Օսմանյան կայսրության մեջ ապրող քրիստոնյաներին, այլև քրիստոնյա գերտերությունները: Դրա համար էլ նրանք ծաղրում էին եվրոպական գերտերություններից մեր ունեցած ակնկալիքները: «Հայկական դատը պատկանում է Եւրոպայի տէրտէրներին»[19],- ասում էին նրանք, և ինչքան էլ ցավալի է, նույնքան ճշմարիտ էին: Միմյանց հանդեպ քաղաքական դավեր լարելով՝ եվրոպական քաղաքակիրթ, ժողովրդավար և քրիստոնյա պետությունները հայերին հանձնեցին իսլամի վրեժխնդրությանը:

Այդ պետություններից յուրաքանչյուրը պատրաստ էր գաղտնի համաձայնագիր ստորագրելու թուրք սուլթանի հետ՝ ոտնահարելով ինչպես դաշնակիցների, այնպես էլ Օսմանյան կայսրության մեջ տառապող քրիստոնյա ժողովուրդների շահերը: Եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունների առկայության մասին գիտեին բոլորը, այդ թվում՝ նաև սուլթանը, որն էլ կարողացավ լավագույնս օգտագործել դրանք: Այդ հակասությունների առկայությունն էր, որ հնարավոր դարձրեց հայերի ցեղասպանությունը: Եվրոպական դիվանագետներից մեկի հետ հանդիպման ժամանակ սուլթան Համիդն ուղղակիորեն հայտարարում էր. «Կը վստահացնեմ Ձեզ թէ Հայերուն խելքը շուտով գլուխնին պիտի բերեմ: Իրենց գլխուն հարուած մը տալով մոռցնել պիտի տամ յեղափոխութեան գաղափարը:

...Գրեթէ հարկադրուած եմ այս արմատական միջոցները ձեռք առնել ի ներկայութեան այն անդուլ հալածանքին եւ թշնամութեանը զոր քրիստոնեայ աշխարհը ցոյց կուտայ: Ռումանիա եւ Յունաստան առնելով՝ Եւրոպա Թուրքիոյ ոտքերը կտրեց: Պուլկարիոյ, Սերպիոյ եւ Եգիպտոսի կորուստով՝ անոր ձեռքերը կորզեցին, եւ հիմա, այս հայկական յուզումով կ'ուզեն մեր ամենէն կենսական մասերը, մեր աղիքը խլել մեզմէ: Այս պիտի ըլլար մեր ամբողջական կործանումը, եւ մենք բոլոր մեր զօրութեամբը դէմ պիտի դնենք ատոր»[20]: Այսինքն՝ եվրոպական այն պետությունների կառավարությունները, որոնք հանձն էին առել բարեփոխումների ծրագրի իրագործումը, քաջատեղյակ էին, թե իրականում ինչ էին մտածում սուլթանը և նրա կառավարությունը բարեփոխումների մասին: Բայց դա նրանց հետաքրքրում էր այնքանով միայն, որքանով շոշափում էր իրենց աշխարհաքաղաքական շահերը: Դա էր պատճառը, որ բարենորոգումների ծրագրի համար պատասխանատվություն կրող եվրոպական պետությունները, ինչպես նաև Ռուսաստանն իրականում ոչինչ չարեցին, որպեսզի կանխարգելեն թուրքական իշխանությունների կողմից

[17] Ролен – Жекмен, Армения, армяне и трактаты// Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", М. 1896, 2-ое изд, с.191:
[18] Հ. Ասատրյան, Հատընտիր, էջ 211:
[19] Ասատրյան, Հատընտիր, էջ 195:
[20] Մ. Ս. Գաբրիելեան, Հայկական ճգնաժամը եւ..., էջ 64:

իրականացվող հայկական ցեղասպանության քաղաքականությունը, որն ավելի զանգվածային և անմարդկային դրսևորումներ ստացավ Օսմանյան սահմանադրության ընդունումից հետո՝ Երիտասարդ թուրքերի իշխանության տարիներին: Ավելին, այդ երկրներում արվում էր հնարավորը, որպեսզի իրենց ժողովուրդը չիմանա ճշմարտությունը Օսմանյան կայսրությունում կատարվող իրադարձությունների՝ հայկական կոտորածների և ցեղասպանության մասին: Եվ այդ հարցում հսկայական դերակատարություն ունեցավ եվրոպական մամուլը, որը գրեթե ամբողջությամբ հրեաների ձեռքում էր: Պատահական չէ, որ, անդրադառնալով այդ շրջանի գերմանական մամուլին, Մ. Ս. Գաբրիելյանը գրում էր. «Բեռլիներ Տագելբրատը» (Berliner Tageblatt), վերածվել էր «տաճկաց դեսպանատան օրգանի... Ի սկզբանէ անտի «Տագելբրատը» ուրացաւ հայոց ջարդերը, ծաղրեց անգլիացիները... եւ ներկայացուց հայերին իբրեւ անկախութիւն երազող ապստամբներ... Հրեայ մամուլին հայերուն տուած վնասն անհուն անհաշուելի է»[21]:

1919 թվականին Արմին Վեգները, որն իր աչքերով էր տեսել հայ ժողովրդի ցեղասպանությունը, հրապարակեց բաց նամակ («Կտակ անապատում»)՝ ուղղված ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին: Չնայած այդ նամակի բացառիկությանը՝ այն, զարմանալիորեն, դուրս է մնացել հայ մտավորականության ուշադրությունից և հայերեն թարգմանվեց միայն 2021 թ.[22]: Վեգները փաստերով հիմնավորում է թուրք կառավարողների ծրագրած հայկական ցեղասպանությունը և խարազանում արևմտյան պետություններին՝ որպես մեղսակիցներ: «1915 թ. գարնանը, երբ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերին երկրի երեսից բնաջնջելու անընդունելի ծրագրի իրագործմանը, նրանց արևմտյան եղբայրների ձեռքերը Ֆրանսիայում, Անգլիայում ու Գերմանիայում թաթախված էին սեփական դժբախտ արյան մեջ, որ նրանք գետի պես հեղում էին իրենց անմտության՝ ողբալի կուրության պատճառով: Ոչ ոք արգելք չեղավ Թուրքիայի խավարամիտ իշխանավորներին՝ վերջ տալու իրենց տաժանագին խոշտանգումներին, որոնց գործադրումն իրապես կարելի է համեմատել միայն խելացնոր ոճրագործի արարքի հետ: Այսպես, նրանք մի ողջ ժողովուրդ՝ տղամարդկանց, կանանց, ծերերի, մանուկների, հղի մայրերի, անօգնական ծծկերների, քշեցին Արաբական անապատ՝ ոչ այլ մտադրությամբ, քան սովահար անել նրանց»[23]:

Շարունակելով ողբերգական փաստերի շարադրանքը՝ Վեգները գրում է. «Ես չեմ դատապարտում իսլամը: Յուրաքանչյուր մեծ դավանանքի միտումն ազնիվ է, և որոշ մահմեդականների վերաբերմունքը ստիպում է մեզ ամոթից գլուխներս կախել Եվրոպայի արարքների առաջ: Ես չեմ դատապարտում հասարակ թուրք ժողովրդին, որի հոգին լի է խոր բարոյախոսությամբ, բայց և չեմ հավատում, թե նրան առաջնորդող այրերն ի զորու են երկիրը երբևէ երջանիկ դարձնելու այն բանից հետո, երբ խորապես խորտակվեց մեր հավատը բարեկրթվելու նրանց ունակության հանդեպ, և ակներև է, որ Թուրքիան երկար ժամանակով կորցրել է ինքն իրեն կառավարելու իրավունքը»[24]:

Վեգները «նամակի» հարցադրումներն ու մտահոգություններն արտահայտում է նաև երեք տարի հետո հրատարակված «Ճիչ Արարատից» գրքույկում: Դատապարտելով հայերի ցեղասպանության կազմակերպիչներին՝ նա, միաժամանակ, խարազանում է արևմտյան տերությունների հանցավոր անտարբերությունը՝ արդարացիորեն մերկացնելով նրանց քաղաքական և դիվանագիտական խարդավանքները: Ի լուր աշխարհի՝ նա հայտարարում է. «Ինչ արեցին Արևմուտքի հաղթանակած տերություններն իր հավատի ու ոգու համար տանջահարված այդ փոքր ժողովրդին լիակատար բնաջնջումից պաշտպանելու գործում: Թույլ տվեք Ձեզ, այդ պետությունը-

[21] Մ. Ս. Գաբրիելեան, Հայկ, 1896, էջ 139–140:
[22] Ա. Թ. Վեգներ, Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին հայ ժողովրդին Միջագետքի անապատ արտաքսելու մասին, Բեռլին, հունվար, 1919 թ., «Դրօշակ», թիվ 8, 2021 թ.: https://akunq.net/am/?p=79231
[23] Նույն տեղում:
[24] Նույն տեղում:

ների ղեկավարներիդ, հիշեցնել Ձեր հանդիսավոր հավաստիացումներն ու երաշխիքները, որոնք պատերազմի ժամանակ խոստացել էիք Հայաստանին: Թույլ տվեք մեկ անգամ ևս հիշեցնել Ձեզ և ողջ աշխարհին Ֆրանսիայի Նախարարների խորհրդի նախագահ Կլեմանսոյի 1918 թ. հուլիսի 14-ին Հայաստանին ուղղված խոսքն այն մասին, որ մարդկության և արդարության օրենքների հիման վրա դաշնակից պետությունները մշտապես իրենց պարտքն են համարում հոգ տանել այդ երկրի ճակատագրի համար: Միթե չի լսվում, հիշողությունից այդպես արագորեն ջնջվում է Պուանկարեի մեծադղորդ այն խոսքը, որով նա դիմեց Կիլիկիայում կաթոլիկ հայերի պատրիարքին: Լլոյդ Ջորջը[25], Ռոբերտ Սեսիլը[26] չհապաղեցին հետևել նրա օրինակին, և նրանցից յուրաքանչյուրը որքան կոչեր է ստորագրել հանուն Հայաստանի ազատության... Ինչ եղավ միմյանց հաջորդած այդ հանդիսավոր երդումների արդյունքը. գուցե Խաչակրաց սրբազան արշավանքի հոչակում: Նոր թալան, սով ու կոտորած»[27]:

Մերկացնելով եվրոպական պետությունների մեղսակցությունը հայերի ցեղասպանությանը՝ Ա. Վեգները գրում է. «Դա Եվրոպան է, որը մշտապես ձգտում է մի անարդարությունը փոխարինել մյուսով և չի թաքցնում իր ուրախությունն այն հաջողության առթիվ, որը ձեռք է բերվել տասնյակ հազարավոր անմեղ կանանց ու երեխաների արյան գնով, Եվրոպան, որը գերադասում է վաշխառուական առևտուր անել նրանց տանջամահ անողների հետ, քան փրկել հալածված մարդկային ցեղի բեկորները կործանումից: ....Ֆրանսիան, որը գրավել էր Կիլիկիան միայն այն բանի համար, որ նրան դուր էին գալիս տարածքի բերքառատ հարթավայրերն ու բամբակը, Անգորայի հետ կնքած պայմանագրով հանձնեց Թուրքիային՝ նավթի կամ այլ օգուտներ քաղելու համար»: Եվ ինչ. 150 հազար հայեր, որոնք, հավատալով ֆրանսիական հանրապետության խոստումներին, վերադարձել էին իրենց հայրենի օջախները, վերստին հանձնվեցին նախկին հալածողներին: Այդ ազդու փաստաթղթում, ի լուր աշխարհի, Ա. Վեգները հայտարարում էր. «Ո՛չ նավթ, ո՛չ բամբակ, այլ մարդ: Միթե նույն Ֆրանսիան չի հավաստել ամբողջ աշխարհին, որ արշավանք է ձեռնարկել փոքր ժողովուրդների իրավունքները պաշտպանելու համար: Որտե՞ղ է փոքր ժողովուրդների ազատությունը: Միթե Ֆրանսիան չէր զենք տրամադրում Թուրքիային, որն էլ կրակում էր Հայաստանի սրտին»[28]:

Ֆրանսիան, որը հայտնի է իր հայասեր քաղաքականությամբ, 1939 թ. Թուրքիային տվեց իր մանդատին հանձնված Ալեքսանդրետի սանջակը՝ 5000 քառակուսի կիլոմետր տարածքով և 220000 բնակչությամբ, այն դեպքում, երբ բնակչության միայն 38,9% էր թուրք, 46,2%-ն արաբ էր, իսկ 11,4%-ը՝ հայ[29]: Այսպիսով՝ ավելի քան 40000 հայ բնակչություն ստիպված էր հեռանալ իր հայրենիքից դեպի Սիրիա կամ Լիբանան:

Հաշվի չառնվեց նույնիսկ այն հանգամանքը, որ վերոնշյալ վայրում էր գտնվում քրիստոնեական աշխարհի հնագույն սրբատեղիներից մեկը՝ Անտիոքի ավտոկե-

[25] Դեյվիդ Լլոյդ Ջորջ (1863–1945 թթ.), անգլիացի պետական գործիչ, 1916–1922 թթ.՝ Անգլիայի վարչապետ, 1919–1920 թթ.՝ Փարիզի հաշտության կոնֆերանսի և Վերսալյան պայմանագրի գլխավոր հեղինակներից: Հանդես է եկել հօգուտ հայկական հարցի դրական լուծման՝ դատապարտելով Մեծ Բրիտանիայի ավանդական թուրքամետ քաղաքականությունը: Իր ելույթներից մեկում նա հայտարարում է. «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-97 և 1909 թվականների սոսկալի սպանդին և 1915 թվականի զարհուրելի կոտորածին»: Սակայն, այդ նույն ժամանակահատվածում անգլիական դիվանագիտությունը և ռազմական ղեկավարությունը գեներալ Թոմսոնի ղեկավարությամբ հայկական Արցախը բռնի ձևով ամրակցեցին Ադրբեջանին՝ տեղում գեներալ նահանգապետ նշանակելով տխրահռչակ Խոսրով բեկ Սուլթանովին, ճնշելով հայերի դիմադրությունը (այս մասին տե՛ս Հարություն Խաչատուրյան, Անգլիական քաղաքականությունն ի Անդրկովկաս, Հայրենիք, 1945, թիվ 3, Բոստոն):

[26] Ռ. Սեսիլ (1864 - 1958), անգլիացի քաղաքական գործիչ: 1915-1916 թվականների ընթացքում Համայնքների պալատում բազմիցս հանդես է եկել Թուրքիայում հայերի զանգվածային տեղահանությունների և ջարդերի մասին հաղորդումներով: Դեմ է եղել 1919 թվականին Հայաստանից անգլիական զորքերի դուրսբերմանը՝ կարծելով, որ Մեծ Բրիտանիան պատասխանատու է հայերի ճակատագրի համար, որոնք 1916 թվականին Անտանտի շահերի զոհը դարձան:

[27] Wegner A. Der Schrei vom Ararat, Leipzig, 1922, S. 2-3, նաև Ս.Ս.Ստեփանյան, Արմին Վեգները որպես մեծ մարդասեր և հայոց ցեղասպանության ականատես, http://lraber.asj-oa.am/667/1/2010-1-2__437_.pdf

[28] Wegner A. Der Schrei vom Ararat, Leipzig, 1922, S.6:

[29] Санджак Александретта, https://ru.wikipedia.org/wiki/Санджак_Александретта, https://ru.wikipedia.org/wiki/Санджак_Александретта

ֆալ (ինքնանկախ) ուղղափառ եկեղեցին, որը, ըստ ավանդույթի, հիմնադրել են Պողոս և Պետրոս առաքյալները՝ դեռևս 37 թվականին: Այդ եկեղեցին վերահսկում էր Սիրիայի, Կիլիկիայի, Միջագետքի և ամբողջ Արևելքի ուղղափառ հավատացյալներին: Միաժամանակ, Պետրոսը համարվում է Հռոմի եկեղեցու հիմնադիրն ու առաջին Հռոմի պապը, սակայն սա ևս ոչ մի նշանակություն չունեցավ… Այլ հարց է, որ այդ եկեղեցու հարցում անտարբեր գտնվեցին նաև ռուսները, այն դեպքում, երբ, 1908 թ.-ից սկսած, պատրիարքությունը Ռուսաստանի կայսր Նիկոլայ II-ի անձնական միջոցներից տարեկան ստանում էր 30 000 ռուբլի՝ վանական ծախսերի համար[30]:

Չնայած այդ ամենին, այնուամենայնիվ, դեպի Եվրոպան մենք ունեինք «մի քրիստոնեական զգացում եւ շնորհիւ մեր տարօրինակ խորհրդապաշտութեան - մեր ազգային հիւանդութեան – մեր սեփական տրամադրութիւնները դրել էինք եւրոպացու հոգու մէջ եւ ամենախոր կերպով հաւատացել, թէ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները նոյն զգացումներն ունեն մեր հանդէպ, թէ բոլոր պատերազմները մղւում են յանուն մեր փրկութեան»: Այս «ինքնախաբեությունը» (որն առկա է նաև այսօր), ինչպես նկատում է Գ. Նժդեհը, մեզ մղեց «քաղաքական մուրացկանութեան, եւ քանի որ մենք նաեւ թոյլ էինք, անձնատուր եղանք լալկանութեան, որը ապացոյց է հոգեւոր տհասութեան կամ անարիութեան: Մուրացկանութիւնը զզուելի է ընդհանրապէս: Մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդուած, այլ եւ յաճախ զզւանքից. մուրացկանին եւ հաշմանդամին անկելանոց են տալիս եւ ոչ անկախ հայրենիք»[31]:

Հ. Ասատրյանի «Հայաստան-Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում» աշխատության «Առաջաբանում» Գ. Նժդեհը գրում է. «Աշխարհը դեռ չի հասկացել նաե'ւ մեր նորագոյն ողբերգութիւնը: Դա միայն նրանում չէ, որ թուրքը դաւադրաբար ջարդի մատնեց մեր ժողովրդի կէսը, այլ՝ որ հին նենգաշահ Եւրոպան իր ընթացքի անբարոյականութեամբ ներշնչեց նրան, թէ կարելի է միլիոնաւոր քրիստոնեաներ ջարդել եւ անպատիժ մնալ: Դա նրանում չէ, որ գերեզմանոցի վերածուեց լոյսի եւ արդար վաստակի աշխարհ մեր հայրենիքը, այլ՝ որ այդ վանդալականութիւնը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ Եւրոպան քաղաքականապէս ամենազօր էր, իսկ Թուրքիան՝ անկեալ: ….Մենք ի զուր սպասեցինք, սպասեցինք մարդկօրէն, որ նա (Եվրոպան - Յու. Հ.) հայկական ողբերգութիւնը դարձնէ ի'ր ողբերգութիւնը: Աւա'ղ, նա չհասկացաւ, որ արեւմտականութեան եւ քրիստոնէութեան Արեւելքի հերոսական պահակի ֆիզիքական մահը համազօր պիտի դառնար իր բարոյական մահուան»[32]: Այլ խնդիր է, որ այդ «հերոսական պահակի» պարտականությունը մենք ստանձնել էինք կամովի: Այլ խնդիր է, որ մենք էինք ստեղծել այն պատրանքը, որ Եվրոպան պատրաստ է պատերազմելու Օսմանյան կայսրության հետ՝ հանուն քրիստոնեության արևելյան այս «կղզյակի», անտեսելով քաղաքական տրամաբանությունը՝ քաղաքական շահը: Այլ խնդիր է, որ մենք, որպես տիեզերական տառապանքի և ցավի կրողներ, խորությամբ ապրում էինք նաև Արևմուտքի բարոյական անկման ողբերգությունը…

Ընդհանրացնելով եվրոպական գերտերությունների՝ հայ ժողովրդի և Հայաստանի հանդեպ վարած քաղաքականությունը, Հ. Ասատրյանը գրում է. «Անհունօրէն զարհուրելին վիճակուեց Հայաստանին: Այստեղ, 20–րդ կոչուած դարում, Եւրոպական հզօր ոյժերի աչքի առաջ եւ նրանց մեղսակցութեամբ, քրիստոնեայ մի ազգ եւ մէկը արիական ցեղի ամենամեծ եւ ամենահինքնորոյն մշակոյթներից՝ խորտակուեցին մոնղոլական բարբարոսութեան հարուածների տակ: ….Մեղսակից հայ ազգի ահաւոր նահատակութեան՝ քաղաքական Եւրոպան նրան էլ պիտի պարտադրէր սպանիչ մի Վերսալ: ….Լոզանի դաշնագրով (1923 թ.) դա հայերի դարաւոր հայրենիքը թողեց նրանց սպանիչներին»[33]: Այո՛, մեզ վիճակվեց նաև Լոզանը, որը Գ. Նժդեհը բնութագրում է որպես «Եվրո-

[31] Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 64:
[32] Գ. Նժդեհ, Խռովիչ ճշմարտութիւնների մի գիրք: //Հ. Ասատրեան, Ընտիր երկեր, էջ 181:
[33] Հ. Ասատրեան, Հատընտիր, Եր. 2004, էջ 188–189:

պայի բարոյական անկման ու ամօթանքի գողգոթան, ուր խաչ հանուեց մօտ երկու միլիոն անթաղ մեռելների դատը, առանց անդրադառնալու, որ դրանով նա բարոյապես մեղսակից է դառնում ջարդարարներին...»[34]:

Լոզանի «ամոթալի» պայմանագրով էր, թերևս, պայմանավորված Ավ. Իսահակյանի՝ Եվրոպայի հանդեպ ունեցած վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը: Եթե Ղ. Ալիշանը սահմանափակվում էր՝ հայտարարելով, որ «Եվրոպայու բարոյականն ավերված է», սնանկացած, նույնիսկ նախամարդու բնական մարդասիրություն չունի, ստախոս է և շահամոլ, Իսահակյանն ավելի կոշտ է իր բնութագրումներում: 1921 թ. Ա. Չոպանյանին ուղղված իր նամակներից մեկում նա գրում է. «...գարշելի Եվրոպայից այլևս... սպասելիք չկա. պիտի... ամփոփվել Ասիայում. հաշտվել դրացիների հետ, մտերմանալ բոլշևիզմին, և զարնել ամեն տեղ եվրոպացուն... խաբված ենք ապուշի պես... նոր ուղիներ պիտի փնտրել...»[35]: Իսկ մեկ այլ առիթով ասումէ. «Նզո'վք և թո'ւք Եվրոպայի քաղաքակրթության և քրիստոնեության վրա. սո՞ւտ խոսքեր են՝ լուսավորություն, ազնըվություն, կրթություն. Եվրոպան կատարելագործված գազան է»[36]:

Եվրոպայի քաղաքականությունից հիասթափված էր ոչ միայն հայ ժողովուրդը: «Սրտի տէր ամէն մարդ, որ դեռ չէր կորցրել իր Աստծու հետ խօսելու իրաւունքը՝ մատնուեց բարոյական տանջանքի», և շատերը գերմանացի արևելագետ և հայագետ Յոզեֆ Մարքվարտի (1864–1930 թթ.) հետ զգացին, որ «Եւրոպայի մեղքերի ամօթից այլեւս կարելի չէ նայել երկնքին»[37],- գրում է Հ. Ասատրյանը:

Փոխվե՞լ է, արդյոք, Եվրոպան կամ Արևմուտքն ընդհանրապես իր աշխարհաքաղաքական ծրագրերի, բարոյական ըմբռնումների և կողմնորոշումների մեջ: Ո'չ, չի փոխվել: Իր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ծրագրերով, ռազմավարությամբ Արևմուտքը մնացել է նույնը: Մասամբ փոխվել է մարտավարությունը: Հետևաբար՝ կասկածից վեր է, որ այդ ծրագրերը փորձելու են իրականացնել ավելի դաժան ու անմարդկային մեթոդներով, հատկապես, որ այսօր բացակայում են Արմեն Վեգների, Յոզեֆ Մարկվարտի, Յոհաննես Լեփսիուսի, Ջեյմ Բրայսի նման մարդիկ, որոնք կարող էին դատապարտել անմարդկային քաղաքականությունը, արթնացնել Արևմուտքի քնած խիղճը: Ավելին, եթե XX դարի սկզբին հավաքական Արևմուտքը պայքարում էր միայն ռուսական կայսրության դեմ, ապա այսօր նա պայքարում է նաև ընդդեմ Չինաստանի և Իրանի: Աշխարհաքաղաքական այդ ծրագրերի իրականացման ճանապարհին Հայաստան աշխարհը և հայ ժողովուրդը կարող են նաև ոչնչանալ... Այսինքն՝ նրանք ցանկանում են ավարտին հասցնել այն ծրագիրը, որը հարյուր տարի առաջ չհաջողվեց իրագործել: Դա համաթուրանականության ծրագիրն է, որով հնարավոր է կործանել Ռուսաստանը, Չինաստանը և Իրանը: Հայաստանը, որպես աշխարհաքաղաքական միավոր, այդ ծրագրերում ընդհանրապես բացակայում է: Հայաստանը, առավել ևս՝ հայ ժողովուրդը Արևմուտքին հետաքրքրում են որպես «պատվաստի ընձյուղ, իրենց չորացած ճյուղերի համար», ինչպես ժամանակին նկատել էր XIX դարի մեծագույն հայը՝ Ղևոնդ Ալիշանը...

Այդ հարցում համոզվելու համար խորհուրդ է տրվում մեկ անգամ ևս կարդալ Սամուել Հանտինգտոնի (1927–2008 թթ.) «Քաղաքակրթությունների բախումը» (Clash of Civilization, (1992 թ.)): Հանթինգտոնը հայկական մշակույթը և հայ ժողովրդին դիտարկում է ռուսական՝ ուղղափառ քրիստոնեական քաղաքակրթության ծիրում, մինչդեռ մահմեդական Ադրբեջանին՝ Մերձավոր Արևելքի (Greater Middle East) մահմեդական քաղաքակրթության մեջ՝ որպես հակադրություն ուղղափառ ռուսական քաղաքակրթությանը կամ, ինչպես ավելի հաճախ ասում են թուրք գաղափարախոսները, պանթուրանական դաշտում: Եվ ամենևին պատահական չէ,

[34] Գ. Նժդեհ, Խռովիչ ճշմարտութիւնների մի գիրք //Հ.Ասատրյան, «Հայաստան – արիական նախադիրք Առաջաւոր Ասիայում» գրքի առաջաբանը: Հ. Ասատրյան, Հատընտիր, էջ 181:
[35] Ավ. Իսահակյան, ԵԼԺ, 6 հ., հ. 6, Եր.1979, էջ 185:
[36] Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Եր., 1977, էջ 327:
[37] Նույն տեղում:

եթե տարեսկզբին Արևմուտքը Հայաստանի իշխանություններից պահանջում էր «իջեցնել Ղարաբաղի կարգավիճակի նշաձողը՝ փաստացի ակնարկելով, որ Հայաստանը պետք է համաձայնի հակամարտությունը կարգավորել Ադրբեջանի կազմում Արցախի համար ինքնավար կարգավիճակի սահմանմամբ», ապա այժմ արդեն խոսվում է արցախցիների՝ որպես ազգային փոքրամասնության ինտեգրման մասին:

Լոզանում արևմտյան գերտերությունները փակեցին հայկական հարցը, և այսօր մեր աչքի առաջ «վաճառվում» է Արցախը: ԱՄՆ-ի պետքարտուղարության վերջին հայտարարության մեջ ողջունվում է Ադրբեջանի ղեկավարության «համաներում» կիրառելու պատրաստակամությունը (խոսքն Արցախի ներկայացուցիչների մասին է): Զարմանալ պետք չէ ընդհանրապես: Հենց Արևմուտքը ժամանակին մեկ և կես միլիոն հայերի կոտորածն օգտագործեց որպես «փոխանակման ապրանք», հիմա ինչ է նրա համար 120 հազարը… Մանավանդ, որ կա նպատակ՝ Կովկասից վտարել ռուսական ներկայությունը… Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը «Ցարգրադ» հեռուստաալիքի հետ զրույցում Արևմուտքի գործողությունները որակել է իբրև «բացահայտ սադրանք». «Ես տեղյակ եմ, մենք ունենք նման տեղեկություն, որ Միացյալ Նահանգներն ու դաշնակիցները հայերին ազդակներ են ուղարկում՝ եկեք մեզ մոտ, քշեք ռուսներին ձեր տարածքից, և սահմանապահներին քշեք, և ռազմակայանը հանեք, մենք կօգնենք ապահովել ձեր անվտանգությունը»[38]: Մինչդեռ, իրականում, Հայաստանը կամ հայությունը, որպես քաղաքական գործոն, Արևմուտքի ծրագրերում կա՛մ չկա ընդհանրապես, կա՛մ, եթե անգամ կա, ապա ոչ թե որպես նպատակ, այլ իբրև միջոց, գործիք… Արևմուտքի համար ամենևին կարևոր չէ հայ, վրացի կամ ուկրաինացի ժողովրդի ազատության խնդիրը: Նրա նպատակը Ռուսաստանի՝ որպես քաղաքական գերտերության ոչնչացումն է: Մի՞թե դա չի հաստատում ուկրաինական իրադարձությունների առնչությամբ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի և Կոնգրեսի առաջ նախագահ Բայդենի՝ «Երկրի վիճակի մասին» ամենամյա ուղերձը, որտեղ նա ուկրաինացիներին անվանում է իրանցիներ. «Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը կարող է պաշարել Կիևը տանկերով, բայց նա երբեք չի նվաճի Իրանի ժողովրդի սիրտը և հոգին»[39]: Դուք կասեք ծերունական երևույթ է՝ կապված հիշողության կորստի հետ, իսկ ես ասում եմ՝ նրանք թքած ունեն ուկրաինացի, հայ, վրացի և մյուս ժողովուրդների վրա, նրանց համար բոլորը նույնն են, միայն թե դեմ լինեն Ռուսաստանին….

Ի՞նչ եղավ, և ո՞րն էր հայ ժողովրդի պատասխանը քրիստոնյա Եվրոպային… Ըմբոստացա՛վ, մերժե՛ց, դատապարտե՛ց… Իհարկե, ոչ: Քրիստոնեության ընդունումից հետո այդ հասկացությունները դատապարտելի են դարձել հայկական մտածողության և արժեհամակարգի համար: Քրիստոնեությունն ուսուցանում է հնազանդություն, խոհեմություն, և հայ ժողովուրդը «խոնարհումով», «խոհեմաբար» ու «ըմբռնումով» ընդունեց այդ վերաբերմունքը:

Հ. Ասատրյանը գրում է. «Կրօնապէս պատուխնդիր մարդկանց թէ ժողովուրդների համար զարհուրելին ոչ թէ թշնամուց կրած նահատակութեան տանջանքն է, այլ՝ հաւատակիցների դաւաճանութեան պատճառած ցաւը… Տառապած, բայց հպարտութիւնը չկորցրած մարդկանց պէս՝ ազգերն էլ նախընտրում են սպանուել թշնամուց, քան թէ կրել բարեկամի վիրաւորանքը»[40]:

Ճապոնացու հպարտությամբ պատժում ենք ինքներս մեզ՝ բարեկամից կրած վիրավորանքը հաղթահարելու նպատակով: Դրա ամենահիմնավոր ապացույցն ուղիղ հարյուր տարի հետո կատարված իրադարձություններն ու զարգացումներն են, և հայ ժողովրդի նույնական արձագանքը… Ինչպես հարյուր տարի առաջ, այսօր էլ հայությունը կանգնած է լինել-չլինելու, ցեղասպանության և հայրենիքի

[38] https://www.aniarc.am/2023/05/17/lavrov-usa-armenia-may-2023/
[39] https://stolica-s.su/archives/330130
[40] Նույն տեղում, էջ 202 – 203:

վերջնական կորստի առաջ: Անկասկած, պատմությունը նրա համար չէ, որ ճշմարիտ եզրակացությունների հանգես և ընտրես զարգացման միակ ճշմարիտ ուղին: Պատմությունը նրա համար է, որ միևնույն սխալը նույնականությամբ երկրորդ անգամ թույլ չտաս: Բայց քանի որ մենք պատմությունը չենք սիրում, հատկապես՝ մեր ժողովրդինը, նույն սխալը կարող ենք թույլ տալ նաև երրորդ ու չորրորդ անգամ, եթե, իհարկե, մեզ՝ որպես ազգի և պետության այդ հնարավորությունը տրվի ևս մեկ անգամ...

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրեան Հ., Հատընտիր, Եր., 2004:
2. Լաստիվերցի Ա., Պատմություն, թարգմ.՝ Վ. Ա. Գևորգյանի, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Մանուկյանի, Եր., 1971:
3. Բասմաճյան Կ., Լևոն Ե Լուսինյան. վերջին թագավոր հայոց, Փարիզ, 1908, https://digilib.aua.am/book/1348/1615/Լեւոն%20Ե%20Լուսինեան.%20Վերջին%20թագաւոր%20Հայոց?pageNum=2
4. Գաբրիելեան Մ.Ս., Հայկական ճգնաժամն եւ վերածնութիւն, 2-րդ հրատ., Պոստոն, տպ. Ատլանդեան, 1909:
5. Լեո, Երկերի ժողովածու, առաջին հատոր, Եր., 1966:
6. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 70-ական թթ.), Եր., 1978:
7. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 2, Եր., «Զանգակ», 2014:
8. Չոպանեան Ա., Պատասխանատուները, «Անահիտ», Ա տարի, N 3, 1899:
9. Սարուխան, Հայկական խնդիրն եւ ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), Թիֆլիս, 1912:
10. Վարանդյան Մ., Հայկական շարժումների նախապատմությունը, հ. 2, Ժնև, 1913:
11. Թեոֆիլ Վ. Ա., Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին հայ ժողովրդին Միջագետքի անապատ արտաքսելու մասին. Բեռլին, հունվար, 1919 թ., «Դրօշակ», թիվ 8, 2021 թ., https://akunq.net/am/?p=79231
12. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը: Հ. Ա. Ուսումնասիրություն և թարգմանություններ, Եր., 2005:
13. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, Բեյրութ, 1959:
14. Моруа А. Жизнь Дизраэли. М., 1991.
15. Ролен – Жекмен, Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М. 1896, 2-ое изд.

Юрий ОВАКАНЯН
Кандидат философских наук, доцент, АГЭУ

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

ЗАПАД В КОНТЕКСТЕ НАШЕЙ НАЦИОНАЛЬНОЙ ТРАГЕДИИ

Армянский народ – это детище Армянского нагорья и Востока. Он почитает традиции, любит природу и эмоционален. Его культура – это культура сердца, вхождение в чужой Мир, жизнь чужой заботой и болью... Человек Востока не претендует на признание себя Миром или Другими. Именно поэтому гениальный Туманян, родной стихией которого был Восток, отмечал, что мы не знаем ни себя, не своих соседей... Запад воспринимает мир исключительно разумом. Здесь главное не человек, а техника. Здесь все рассчитано, исходя из прибыли. Здесь не живут чужими проблемами. Западная цивилизация опирается на иной Духовный Путь, на разум, исповедует иные морально-этические и культурные ценности, вытекающие из разумного эгоизма... Каждый из них ценен по-своему. Однако концепция «варварского Востока и цивилизованного Запада», созданная Геродотом и Аристотелем, получила дальнейшее развитие у К. Монтескье «О духе законов» и в творчестве А. де Токвилья, стала преобладающей в общественном сознании.

После нашествий Александра и, особенно, национализации христианства, наш взор был направлен на Запад, в сторону Европы... Мы, воевавшие вместе с Востоком против Запада, стали носителями и распространителями западных ценностей на Востоке. И на Востоке на нас

стали смотреть как на чужаков... Запад никогда не считал нас союзником и не стоял за нас... хотя мы взяли на себя тяжелую и ответственную роль распространителя западных культурных и гражданских ценностей на Востоке... Автор во многих примерах пытается обосновать, что в основе потери нашей государственности, всех наших больших и малых трагедий лежала наша неправильная и неоправданная ориентация на Запад..., не задумываясь даже, что у Запада свои геополитические интересы, среди которых никогда не было существования суверенной Армении, не говоря уже о мощном государстве. К сожалению, с таким же упорством мы повторяем ту же ошибку и сегодня, ожидая поддержки Запада, вместо наших естественных союзников...

Ключевые слова: *конфликт Восток – Запад, христианство, ислам, потеря армянской государственности, борьба за независимость, заговор, крестоносцы, теория равновесия, Берлинский конгресс, геноцид, Севрский договор, Лозаннский договор, битва за выживание Арцаха*

Yuri HOVAKANYAN
PhD in Philosophy, Associate Professor, ASUE

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

THE WEST IN THE CONTEXT OF OUR NATIONAL TRAGEDY

The Armenian people are deeply rooted in the Armenian Highlands and the East. They are characterized by their traditionalism, love for nature, and emotional disposition. Their culture is one of the heart, marked by empathy for others, sharing their joys, and feeling their sorrows.

The man of the East does not claim to be recognized by the world or by others. That is why the genius Tumanyan, whose native element was the East, noted that we know neither ourselves, nor our neighbors... The West perceives the world exclusively with the reason.

The main thing here is not the person, but the technique. Everything here is calculated based on profit. Here people do not live with other's problems. Western civilization follows a different spiritual path that relies on reason, professes different moral, ethical and cultural values that derives from rational egoism. Each of these is valuable in its own way.

However, the concept of "barbarian East and civilized West", created by Herodotus and Aristotle, was further elaborated by Sh. Montesquieu's "On the Spirit of Laws" and the works of A. de Tocqueville, eventually shaping public perception.

Following the invasions of Alexander and, especially, the adoption of Christianity as a national identity, our focus shifted westward, towards Europe. We, who once fought together with the East against the West, became carriers and promoters of Western values in the East. The East began to percieve us as outsiders. The West never considered us allies and did not advocate for us despite our role in spreading the Western culture and values in the East. Through numerous examples, the author attempts to justify that our loss of statehood, all our big and small tragedies stemmed from our wrong and unjustified orientation towards the West. We often overlooked the fact that the West has its own geopolitical interests, with no inclination to support the existence of a sovereign Armenia, let alone a powerful state. Unfortunately, with the same persistence, we repeat the same mistake today seeking support from the West instead of our natural allies.

Keywords: *East-West conflict, Christianity, Islam, loss of Armenian statehood, struggle for independence, conspiracy, crusaders, balance theory, Berlin Congress, genocide, Treaty of Sèvres, Treaty of Lausanne, battle for the survival of Artsakh*